**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Թեղուտ համայնք, 1փող շենք 9  ՀՀ Լոռու մարզ,
գԹեղուտ, 1 փող. 9 շենք, Հեռ. (077) 209926 ,
Հեռ. (077)209926 teghut.lori@mta.gov.am

N 113
*15 սեպտեմբեր 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում եմ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի թիվ 20,թիվ 21 որոշումները:

Առդիր՝2 թերթ:

9/15/2017

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **ՖՐՈՒՆԶԵ ՆՈՐԵԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Թեղուտ, (077) 209926, teghut.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 20-Ա

ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՄԻԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին և 102-րդ հոդվածի 3-րդ մասինհամապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող միավորվող համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի) 2017 թվականի նոյեմբերի 5-ի ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Թեղուտ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել մշակույթի տան շենքը (հասցեն՝ 1–ին փողոց, շենք 3):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՒՆԶԵ ՆՈՐԵԿՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 15-ին
գ.Թեղուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Թեղուտ, (077) 209926, teghut.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՄԻԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ(ԵՐ) ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող միավորվող համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար՝ քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Թեղուտ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) 1փողոց տուն 16՝ ցանկապատը՝ 10 մետր/ քառակուսի
2) 1փողոց տուն 8 ՝ դեպի փողոց նայող պատը ՝10 մետր/ քառակուսի

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՒՆԶԵ ՆՈՐԵԿՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 15-ին
գ.Թեղուտ